

Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF)- Արեվելյան գործընկերության «ՓՄՁ-ների մրցունակության ծրագիր» - «Հայէկոնոմբանկ»

Երկիր:
ՀԱՅԱՍՏԱՆ

Ծրագրի համարը:
51737

Բիզնես ոլորտ:

Ֆինանսական հաստատություններ

Պետական/մասնավոր
ՄԱՍՆԱՎՈՐ

Բնապահպանական կատեգորիա:
FI

Հաստատման ամսաթիվը:
22-ը հունիսի 2021

Կարգավիճակը:
Հաստատված

Ծրագրի ամփոփ փաստաթղթի
անգլերեն տարբերակի
հրապարակման ամսաթիվը:
08-ը նոյեմբերի 2021

*Առաջնորդվելով Տեղեկատվության հասանելիության մասին հրահանգի 1.4.2 (iii) բաժնով՝ «Բանկի
ղեկավարության կողմից հաստատված այն ծրագրերը, որոնց հաստատման լիազորությունը պատվիրակել է
Տնօրենների խորհուրդը, Ծրագրի ամփոփ փաստաթուղթը պետք է հրապարակվի «առարկություններ չկան»
համապատասխան ծանուցման ժամկետի սկզբում Բանկի անդամ հանդիսացող երկրին՝ համաձայն ՎՁԵԲ-ի
ստեղծման Համաձայնագրի 13-րդ հոդվածի (iii)-ի»:*

Ծրագրի նկարագրություն

ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում ՓՄՁ մրցունակության ծրագրի շրջանակներում (EaP SMEC) միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) ֆինանսավորման համար Հայէկոնոմբանկին մինչև 5 միլիոն եվրոյի չափով առանց գրավի առաջնային վարկի տրամադրում:

Ծրագրի նպատակները

ՎՋԵԲ-ի ներդրման միջոցները, համաձայն ՓՄՁ մրցունակության ծրագրի բաղաբաղանդային դրույթների, Հայէկոնոմբանկի կողմից վարկերի տեսքով կտրամադրվեն մասնավոր հատվածի ենթավարկառուներին՝ դրանց տեխնոլոգիաները և սարքավորումները ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու, այդ թվում՝ կայուն և կանաչ տեխնոլոգիաների կիրառումը խթանելու նպատակով՝ դրանով իսկ ուժեղացնելով ՄՓՄՁ-ների մրցունակությունը:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Վաղ անցումային շրջանի վրա ազդեցության ցուցանիշը՝ ETI

Ակնկալվում է, որ ծրագիրը կվերացնի առկա շուկայական խոչընդոտները, որոնց հետ բախվում են ՓՄՁ-ները անհրաժեշտ ներդրումներ կատարելիս (միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման սահմանափակ հասանելիություն, համապատասխան բարելավումների սահմանման և մշակման համար տեխնիկական փորձագիտության բացակայություն): Ծրագիրը նաև ավելի կհզորացնի Հայէկոնոմբանկի կարողությունները նպատակային ներդրումների գնահատման և ֆինանսավորման ոլորտում:

Հաճախորդը

«ՀԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն միջին չափի մասնավոր բանկ է Հայաստանում՝ 54 մասնաճյուղերից բաղկացած ընդարձակ ցանցով, ներառյալ մարզերում տեղակայված 22 մասնաճյուղերը՝ ընդհանուր 859 աշխատակիցներով:

ՎՋԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

5,000,000.00 Եվրո

Ծրագրի ընդհանուր արժեքը

5,000,000.00 Եվրո

Հավելյալություն

Ծրագիրը երկարաժամկետ ֆինանսավորում կտրամադրի Հայէկոնոմբանկին շուկայում, որտեղ գերակշռում են կարճաժամկետ ակտիվներն ու պարտավորությունները: Հայէկոնոմբանկը և նրա հաճախորդները կօգտվեն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում ՓՄՁ մրցունակության կարողությունների զարգացման ծրագրից, որն աջակցում է ներդրումային նախագծերի նախապատրաստմանն ու իրականացմանը: Ենթավարկառուները նաև ֆինանսական խրախուսումներ կստանան հաջողությամբ իրականացված ենթածրագրերի համար:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 2019թ.) Կպահանջվի, որ Հայէկոնոմբանկը համապատասխանի Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին (PR), բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին և Բանկին կներկայացնի տարեկան բնապահպանական և սոցիալական հաշվետվություններ:

Տեխնիկական աջակցություն եվ դրամաշնորհային ֆինանսավորում

SU: Ծրագրին կաջակցի Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող համապարփակ SU փաթեթը, որի նպատակն է աջակցել Հայէկոնոմբանկին կարողությունների զարգացման, ինչպես նաև ծրագրի իրականացման և մշտադիտարկման հարցերում:

Առանց SU: Ենթածրագրերը իրավասու կլինեն ստանալ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող խրախուսական դրամաշնորհներ (ամենափոքր ներդրումային ծախսի կամ համապատասխան ենթավարկի տրամադրված գումարի մինչև 15%-ի չափով):

Ընկերության կոնտակտային տվյալները

Աստղիկ Մանրիկյան

manrikyan@aeb.am

+374-8000-8686

www.aeb.am

0002, Երևան, Ամիրյան փող.23/1

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՉԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՉԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՉԵԲ-ի գնումները](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՁԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՁԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՁԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՁԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍՔ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՉԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀԿԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀԿԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀԿԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՉԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀԿԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող են ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՉԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՉԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթ](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման

միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՅԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՅԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ԾՅԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՅԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՅԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: